

ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Բ. Է Դ Ի Լ Յ Ա Ն

ԲՐԳԱՋԵՎ ԲԱՐԴԵՆԻ  
և ՆՐԱ ՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ



A U S T R I A N

634.95

12827

5-16

5 n. 46 R.

Engraving

24411-504.

504.

634.94

5-16

Բ. ԷՐԻԿՅԱՆ

ԱՏՎԱԿԵԼ է 1861 թ.

ԲՐԳԱՋԵՎ ԲԱՐՊԻՆ  
ԵՎ  
ՆՐԱ ՄԸԾԿՈՒԹՅՈՒՆԸ

A 18629



Б. ЭДИЛЯН

Пирамидальный тополь  
и его возделывание

(На армянском языке  
Армгиз, Ереван, 1948

## Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Հայկական ՍՍ Ռեսպուբլիկայի անտառապուրպկ շրջաններում անտառագուծության հիմնական նպատակը պետք է լինի դարձացադ սոցիալիստական դյուլատնուեաւթյանը անհրաժեշտ փայտանյութ հայթայթել և այդ տեսակետից, բուծման համար ընտրվող ծառատեսակների փայտանյութի պիտանիության հետ միասին, նրանց արագացնությունը ստանում է սուածնակարգ նշունակություն :

Արտագաճ անտառային ծառատեսակների շարքում քարտֆներն, անկատկած, բնում են առաջին տեղերից մեկը։ Երանք խոշոր գեր են կատարելու մեր Ռեսպուբլիկայում, հատկապես նրա անտառապուրպկ շրջաններում, փայտանյութի պաշտպանության մեջ առաջնակարգ նշունակութելու գործութ:

Հողի վելաբերյալ խստապահանջ ըլինելու, հեշտությամբ բարձրացվելու և արագ աճելու իր հատկություններով բարդին գեռես պատմական անցյալում Արարատյան դաշտի և մերձարեկվելյան երկրների բնակչության ուշադրությանն է արժանացել և դարձել անտառասակառ այդ երկրներին փայտանյութ տվող հիմնական ծառատեսակը։ Առավելապես զարգացվել է բրդածերարդին, որը, պահպանելով բարդիների վերը թված հատկությունները, զերպանցում է բարդու այլ տեսակներին շնորհայտի համար ավելի օրինանի իր բնով։

Տեղական շինափայտի և գառելափայտի պաշարներ սուելծելու, ինչպես նաև բնականային երը կանաչազարդելու նպատակով, Հայկական ՍՍԾ-ի կառավարության որոշմամբ բրդածե բարդումը մեր Ռեսպուբլիկայում ստացել է պետական առաջարդական համարյա բոլոր մշանների կոլխոզները, որոնց օգնության դաշտ նպատակով էլ հրատարակվում է այս բրոշյուրը։



## ԲԱՐԴԻՆԵՐԻ ՑԵՂԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարդիները պատկանում են ուռենիների քնտանիքին, առք-  
բերվելով վերջիններից իրենց ընդհանուր ձևով, տերեների և  
ծաղիկների կտղմությամբ։ Բարդիները մեծ մասամբ արագած  
ծառեր են, ունեն խոշոր սաղարթ։ Տերեները լինում են տարբեր  
ձեւի. բայց նշտարաձևերց մինչև կլոր, երբեմն խորշերով, սղացա-  
ծե կամ ամբողջական եղբերով։ Տերեները երբեմն լինում են  
թափուր, իսկ որոշ տեսակների մոտ տերեների ցածրի և վերի  
կողմերը ունենում են տարրեր գունավորում (խիստ կամ պակաս  
կանաչ, կամ թե բաց կանաչ և արծաթաղույն)։ Բրդածե բարգու-  
տերեները եռամիլունաձևերց վոփոխվում են մինչև շեղանվյու-  
նաձևի և ավելի մանր են, քանի նրան ավելի նմանվող կաղամա-  
խի (սև բարգու) տերեները։ Ուռենիներին հակառակ, բարդիները  
ունեն գագաթի բողբջներ, երկար շվերից բացի կարճացած շվեր։

Բարդիները երկտուն ծառեր են, այսինքն յուրաքանչյուր  
ծառ տալիս է միայն մեկ սեռի ծաղիկներ՝ արական կամ խոական։  
Ծաղիկները մանր են, տեղափորված թեփուկայինոր ծածկատերե-  
ների ծոցում, առանձին ծաղկափթությունով։ Ընդհանրապես  
բարդիները ծաղկում են մինչև տերեակալումը։ Պտույլը տուափիկ  
է, որը բացվում է 2—3 վեղիկիկներով։ Պարունակում է մեծ  
քանակությամբ մանր սերմեր։ Վերջիններս հիմքի մոտ պատած  
են բաղմաթիվ մաղմղուկներով, որոնց օդնությամբ, քամու մի-  
ջոցով, կարող են մայր ծառից շատ հեռու տարվել։ Սերմերը  
հասունանում են նույն գարնանը։ Բարդիները պաղաքերում են  
առաստղեն և ամեն տարի, բայց հազվադեպ է պատահանում, որ  
բարգու սերմերը լինեն բեղմնավորված և ծլունակ, որովհետեւ  
վեղեատիվ ձևով բաղմացվելու հետևանքով սովորաբար իբրա-  
մուր գարգացած են լինում որևէ մեկ սեռի ծառեր, որի պատճա-  
ռով քեղմնավորում տեղի չի ունենում։ Այդ երեսությը ավելի

շատ տարածված է բրդաճեղի բարդիների մոտ, որովհետև այդ տեսակի խփական սեռին պատկանող ծառեր համարյա չեն սբուստհում:

Բարդիները տալիս են հաստ բուն, ուժեղ ճյուղավորում և, ինչպես մերը հիշեցինք, խոչոր սարդարթ: Բրդաճեղի բարդին մյուսներից տարբերվում է իր նեղ և երկարաձիգ ասղարթով, որը կազմված է բնին գուգահետ, դեսպի վեր աճող ճյուղերից, դրա հետեւանջով էլ բրդաճեղի բարդու բունը ավելի պիտանի է լինում և բարդար չափական ստանալու համար, քան մյուս ահատակներինը, իսկ խոչոր ճյուղավորում չունենալու հետեւանքով պիտանի է նաև սղոցանյութ ստանալու համար: Երփասաւրդ հասկում բնի վրայի կեղեղը լինում է կոկ, իսկ ավելի մեծ հաստեկութ ձաքճքում է: Արմատային մեստեմը զարդացած է, սակայն մոկերեսային է, հողի առորին շերամերը չի թափանցում:

Բարդիների համարյա բուրու ահատակները, որոնց թվում նաև մեզ հասաքըքուղ բրդաճեղի բարդին, պատկանում են լուսաւեր ծառաւեսակների խմբին և ստվերում զարդանալ չեն կարող: Հոգացին պայմանների նկատմամբ պահանջում են աննպատճ նյութերում հարուստ և խոնավ հողեր: Բնական տարածման զեղացներում նրանք գերազաւում են խոնավ և պարագար հարթավայրերը, սակայն նրանց արհեստականորեն զարդացնելու փորձերը ցույց են տալիս, որ բարդու որոշ տեսակները, առավելապես բրդաճեղի բարդին և կաղամամիեր (ու բարդին), ընդունակ են պարզանալու նաև համեմատաբար աղքատ հողերում: Մեզ հետաքրքրուղ բրդաճեղի բարդին դասվում է պակաս ջերմասեր բարդիների շաբթը և հարավային գոտիներում վաղ աշնանային կամ ուշ գարնանային ցրտահարություններից նրա մատղաց չվերը չեն մնաւախում: Իր համեմատաբար ցրտակայունության ընթրհելի բրդաճեղի բարդին տարածված է Հայստանում համարյա թիւ ամենուութեր:

Բարդիները, նրանց թվում նաև բրդաճեղի բարդին, բնդհանրապես երկարակյաց չեն: Դեռ վաղ հասակում, սկսած 25—35 ասօքեկանից, նրանք հաճախ հիվանդանում են վրտախոտով: Վերջինն ասերածմաւ է բնի կենտրոնով, նրա հիմքից դեպի վերե, բնի որ բարդու բնափայտը գուրկ է հականեխիչ նյութերից, հիվանդությունը հետզհետե քայլայում է բնափայտը, առա-

Հացնում է վեչակ : Հականեխիչ նյութերի բացակայության հետևանքով բարդու բնի վրա առաջացած վնասվածքներն արագ կերպով չեն մեկուսացվում , հիմանդրությունների տարածումը չփ կանխվում և տեղի է ունենում բնափայտի փառում : Այդ պատճառով էլ ամեն կերպ պետք է խուսափել ծառի բնին վնասվածքներ հաշցնելուց :

Նպաստավոր հողային պայմաններում բարդու երկարակինցությունն ամենում է , իսկ բնի փտախտով հիմանդրանալը տեղի է ունենում ավելի մեծ հասակում , հետևապես , խոշոր չափսերի շինափայտ , մանավանդ սղոցանյութի համար պիտանի գերաններ ստանալու ցանկության դեպքում , բարդու ծառուտներին պետք է հատկացվեն ավելի պարարտ հողամասեր և ծառուսի զարդարման ընթացքում նրա խնամքը պետք է դրված լինի բարձր հիմքերի վրա :

Եինարարության մեջ գործադրվող մի շաբաթ ծառատեսակների (օրինակ՝ սոճու , կաղնու , թղկենու) բնափայտին հակառակ , բարդու բնափայտը , նույն հականեխիչ նյութերի բացակայության պատճառով , խոնավ պայմաններում ենթարկվում է սնկային հիմանդրությունների և քայլայլում է : Այս պատճառով շինափայտ առանալու նպատակով բարդու ծառուտները պետք է օգտագործվեն ժամանակին , մինչ ծառերի փտախտով հիմանդրանալը : Բարդու շինափայտը պետք է օգտագործվի կառուցումների այն մասերում , որոնք խոնավության հետ քիչ շփում ունեն :

Դիտողությունները ցույց են տալիս , որ Արարատյան դաշտի համարյա բռնոր դյուղերում , անզամ Երևանում , բնակելի չենքերի միջնարկային վրածածկերում և տանիքներում օգտագործած բրդածեւ բարդու գերանները դիմացել են տասնյակ տարիներ և որոշ պայմաններում միանգամայն ընդունակ են փոխարինել Սովորական Միության այլ մարզերից ներմուծվող սոճու և եղենու շինափայտին : Անկասկած , այստեղ խոշոր դեր են խաղացել մթնոլորտային տեղումների պակասությունը և Աքարատյան դաշտի օդի չորությունը :

Եինարարական և այլ տնտեսական պետքերի համար բարդու շինափայտի պիտանիության օդտին են վկայում նաև նրա բնափայտի մեքենայական հատկությունների վերաբերյալ կատարված հետազոտությունների արդյունքները : Այսպես , օրինակ ,

բնափայտի մանրաթելերի երկարությամբ ճղմելուն ցուցաբերած ժամանակավոր դիմադրությամբ և առաւալիկան ծովան առածգականության մոդուլով՝ բարդու ընափայտը դերազանցում է հասպոնական կրիպտոմերիային և լորենու բնափայտին: Ինչպես հայտնի է հասպոնական կրիպտոմերիան հայտնի է որպես շինափայտ տվող ծառատեսակ:

Մեր բերած օբյեկները համոզում են, որ բարդու բնափայտի հատկությունների ավելի խոր ուսումնասիրությունը կարող է այդ ծառատեսակի շինափայտի օգտադրման ավելի լայն հնարավորություններ ստեղծել: Յանկալի է, որ այս խնդրով զբաղվեն մեր գիտահետազոտական համապատասխան հաստատությունները:

Բարդու բնափայտը փափուկ է և թեթև (չոք վիճակում միշտն տեսակաբար կշխու հալասար է 0,45-ի), օգտադրությունը է կահույքի, զանազան դրությունների, կենցաղային իրերի (տաշտեր, գդալներ, փայտաբահեր, փայտյա կոչիկներ) արտադրության համար: Որպես վառելանյութ, բարդու բնափայտը իր ջերմուակությամբ զիջում է ամուր ծառատեսակներին:

Բրդածն բարդին աճում է մինչև 30 մետր, բնի տրամադիմը հասնում է կրծքի բարձրության վեա մինչև մեկ մետրի: Այդ հատկությունների շնորհիվ նա օգտագործվում է դաշտապաշտպան (քամու դեմ) դոտիներում որպես լավագույն ծառատեսակներից մեկը: Վերը թված հատկություններին եթե ավելացնենք նաև նրա աղիացած հողերում աճելու լուղունակությունը, պարզ ելինի, թե ինչու բրդածն բարդին, մերձարեկելյան երկներից բացի, չատ վագուց արդեն տարածված է Սովետական Միության հարավային մարզերում (մինչև սևահողերի դոտին ներառյալ) և Արևմտյան Եվրոպայում: Բրդածն բարդին արժանի է ուշադրության նաև բնակելի վայրերի կանաչապարհման համար: Իր արագաճությամբ դերազանցելով չատ ծառատեսակների, կարձ ժամանակամիջոցում նա կարող է տալ մեր ըրջանային կենտրոններում և կոլխոզներում բնակչության հանգստի համար անհըրաժեշտ պուրակներ:

Ոչ պակաս նշանակություն ունի բրդածն բարդին նաև հասպարհների և առուների եղբերին կանաչ ծառաչերտեր ստեղծելու համար:

ԲՐԳԱԶԵՎ, ԲՈՐԴՈՒ ԱՃԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծառատեսակի աճի արագությունը կախված է ոչ միայն նրա ցեղական կամ անհատական առանձնահատկություններից, այլև միջավայրից՝ առաջին հերթին նրա բուժման վայրի կլիմայից և հողային պայմաններից։ Մենք վերը նշեցինք, որ բբգածե բարդին կարող է աճել նաև համեմատաբար սպակաս ոննդասու և աղքատ հողերում, բայց այս վեպքում նա թույլ է աճում։ Հայկական ՍՍԾ-ի անտառազուրկ շրջանների չոր կլիմայական պայմաններում, անտառային ծառատեսակների զարդացման համար առանձնակի նշանակություն ունի մթնոլորտային տեղումների քանակը և նրանց բաշխումը տարվա ընթացքում։ «Հարավային Հայաստանի անտառակուլտուրական ըրջաններ» աշխատության մեջ պրոֆեսոր՝ Յարաշենկոն գտնում է, որ Արարատյան գաշտում անտառային ծառատեսակները կարող են զարդանալ միայն արհեստական ուսուզման պայմաններում։ Նույն հողինակի ավյալներով բրդածի բարդին բարվածնին հաջող աճում է Ծաղկածորի ըրջանում (Ուղղողից բացատի թայչաբուխի հովտի ձահացած մարդակետիններում), Գյառնի գետի հովտում, Լենինիանում, սպակայն վերջին երկու վայրերում պահանջում է լրացուցիչ ուսուզում։

Անտառային կուլտուրաների մշակության բազմամյա վորձը Ահեհողային մարդում (Վորոնեժի մարզի կամենինայաստեղ), Կուրսկի մարզի անտառային փորձակայանում և Ռեկրաֆինայի տավաստաններում բերում են այն եղբակացության, որ հողի խոնավության և տեղաւոների բարարար քանակի պայմաններում բարդիները և որոնց թվում մեզ հետաքրքրուզ բրդածի բարդին կարող են զարդանալ նաև առանց արհեստական ոսուզման, եթե տնկվեն գետերի հովտաների խոնավ հողերում։ Այսպես, օրինակ, Կուրսկի մարզի անտառային փորձակայանի տրնկումների թվում բրդածի բարդին տնկված է եղել համեմատաբար չափությունությունություն, այնուամենայնիվ, առանց լրացուցիչ ուսուզում ստանակու, ավելի արագ է աճել, քան ուրիշ ծառատեսակները։

Տարբեր վայրերում և պայմաններում բրդաձև բարդին աճել է հետեւյալ կերպ.

Բռնձման վայրը	Տարբեր	Բարձրութ. մետրերով	Ոսողման պայմանները	Տարեկան ժիջին աճը մետրերով
1. Երեանի շրջակայքի լանչերը	8 - 9	6,0	արհեստա- կան սոսկում	0,7
2. Կուռսկի մարզի փորձակայանը	10	8,3	առանց սոսկման	0,83
3. Վորոնեժի մարզում	8	9,7	"	1,2

Արարատյան դաշտի պայմաններում բրդաձև բարդին աճում է միանգամայն բավարար կերպով։ Շարքերում ծառերը 1,5 մետր իրարից հեռու տնկելու դեպքում բրդաձև բարդու ծառութը 20—25 տարեկան հասակում մեկ հեկտարից տալիս է մոտ 1000—1200 խոր. մետր փայտանյութ, որի 70—75 տոկոսը չենախայտ է։

Արակեսքի պարզ լինի բրդաձև բարդու առավելությունը, բավական է հեշել, որ նույն հասակի սոճու ծառութի փայտանյութի ընդհանուր պաշտը 1 հեկտարի վրա, անդամ լավագույն պայ-  
մաններում աճելու դեպքում չի անցնում 100 խոր. մետրից, կազմու ծառութինը՝ 80—100 խոր. մետրից և հաճարինը՝ 110—115 խոր. մետրից։ Այս թվերը ցույց են տալիս, որ բրդաձև բարդին, փայտանյութի պաշարներ կուտակելու տեսակետից, առնվազն 10 անդամ ավելի արագած է, քան սոճին, կաղնին և Հաճարին, իսկ այդ հանգամանքը անտառագուրկ շրջաններին կարճ ժամանակամիջոցուած փայտանյութ տալու տեսակետից ունի առաջնակարգ նշանակություն։

Իհարկե, բարդու բնափայտը որպես շինանյութ իր հատկություններով զիջում է սոճու և կազմու բնափայտին, մանափանդերկար դիմանալու և խոնավ պայմաններում օդտագործվելու տեսակետից, սակայն ինկատի ունենալով նրա արագաճությու-

նը, ամստառատնիվումների առաջին զրջանում նախապատվությունը պետք է արդի բրդածե բարդուն: Իհարկե այս տնկումներին դուլընթաց հարկավոր է բուծել նաև ավելի դիմացկուն ծառատիսաւկներ:

Բրդածե բարդու անհրաժեշտ ոռողումների չափը պարզելու խնդրում, կարող ենք օգտվել Երևանի շրջակայքում՝ Քանաքեռի և Նորքի սարալանջերում 1937—1940 թ. թ. կատարված անտառացման փորձից: Տնկումները, առաջին տարիներին, ոռողվել են յուրաքանչյուր 7—10 օրը մեկ անգամ, հետագա տարիներին 15—30 օրը մեկ անգամ, իսկ 1943 թվին վեղեացիոն ամբողջ սեղոնում միայն 2—3 անգամ: Ոռողման այսպիսի պայմաններում բրդածե բարդու ծառատունկը զարդացել է և պահպանել իր կենսունակությունը, տարով 1943 թվի ամառը միայն տերենների զալկացում և մի մասի տերևաթափ: (Այս փորձը ցույց է տալիս, որ Արարատյան դաշտում և նախալեռնային զոտում բրդածե բարդու ծառատունկը կարող է աճել արագ և տալ առողջ ծառուտ, եթե տնկումներին տրվի առաջին 4—5 տարվա ընթացքում ամսական 2—3 ոռողում, իսկ հետագայում, վեղեացիոն սեղոնի ընթացքում բավական կլինի ամսական 1—2 ոռողումը:

## ԲՐԴԱԶԵՎ ԲԱՐԴՈՒ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Բարդիները բազմացվում են սերմերով և արմատակալած կտրոններով: Սերմերը չատ մանր են, չունեն սննդանյութ, որն անհրաժեշտ է ծեւլիս սաղմը մնելու համար: Սկզբնական շրջանում բուսակը սնվում է արմատիկի միջոցով և աճող շաքիլների կրղմից կատարվող ասիմիլացիայի չնորհիվ: Որպեսզի սերմից առաջ եկող բուսակը կարողանա զարդանալ, հարկավոր է, որ սերմը ցանելուց հետո, առաջին 10—15 օրվա ընթացքում հողի մակերեսը խոնավ և փուխր վիճակում լինի: Բարակ ծիլերը իրենց նրբության պատճառով չատ չուտ այրվում են արեից: Նման պայմաններ դժվար է պահպանել: այդ պատճառով բարդին սերմերով բազմացնելու ձեւ տարածված չէ:

Բարդու բազմացումը հիմնականում կատարվում է վեղեատառիվ ձեռվ՝ աբմատների կամ շվերի կտրոններով: Աբմատային

կտրոններով բարդիների այն տեսակներ են բազմացվում, որոնց չվերի կտրոնները չեն արմատակալում կամ արմատակալում են շատ դժվարությամբ, (օրինակ, գողղոջուն կաղամակը, ոև բարդին, սպիտակ բարդին և այլն):

Բրդածե բարդին, ինչպես վերը հիշեցինք, շարունակ վեզե-ատախով ձեռվ բազմացնելու հետեանքով, ներկայումս տաքած-ված է զերազանցափես արական սեռի ծառերով, այդ պատճառով էլ սերմեր չե տալիս: Հեշտությամբ բազմացվում է թի փայտացած չվերով, այսպես կոչվող «ձմեռային» կտրոններով և թի ամառային, դեռևս աճման պրոցեսում դանվող, կանաչ կտրոններով:

Բրդածե բարդու բազմացման համար ընարվում են միամյա ուժեղ զարդացած չվեր, և միայն անկանյութի պահանջը ըբավարելու դեղքում վերցվում են երկու տարեկան չվեր: Կտրոնների համար չվերի մթերում պետք է կատարել աշնանը, տերեւաթափից հետո, իսկ այն վայրերում, ուր ձմռան սառնամանիքներից միամյա չվերի ցրտահարվելու վտանգ չկա, կտրոնների կարելի է պատրաստել նաև գարնանը:

Բարդին պատկանում է այն ծառատեսամկների խմբին, որոնք տերեւակալում են վաղ զարնանը, այդ պատճառով նրա չվերից կտրոններ պատրաստելու համար մնում է շատ կարճ ժամանակա. միջոց, որովհետեւ բողոքները բացվելուց հետո կտրոնները սովորաբ վատ են արմատակալում: Մեր մոտ, Արարատյան դաշտում և նախալեռնային գոտում զարունը կարծառուն է: Զմռան փախանցումը զարնան տեղի է ունենում արագ, ուստի մեծաքանակ տնկումների համար բարդու կտրոններ զերազանելի է պատրաստել աշնանից: Կոլխոզներում կտրոնների մթերումը աշնանը կատարել նպատակահարմար է նաև այն նկատառումով, որ ուշ աշնանը աշխառող ձեռքերը համեմատաբար ալիքի աղատ են:

Ծառերից կտրած միամյա չվերը խուրճներով պահվում են խոնավ և սառնամանիքից պաշտպանված նկուղներում: Այդ չվերից կտրոններ կարելի է պատրաստել թի՛ ձմռան ամիսների ընթացքում և թի՛ վաղ զարնանը, նախքան ծառատնկումը: Զմռան ամիսներին պատրաստված կտրոնները իրենց հիմքի կողմով պետք է թաղել խոնավ ավաղում և այդ դրությամբ պահել մինչև զարուն:

Բլրդածե բարդու կտրոնը պետք է ունենա առնվազն 20—30 սանտիմետր հրկարություն, կտրոնի հաստությունը վերի ժառանձրում (զաղաթում) պետք է լինի 0,5 սանտիմետրից ոչ պակաս: Քերծված և լինասված շիվերից կտրոնները չպետք է պատրաստել: Շվերի նվազ ծայրերը նույնպես պիտանի չեն կտրոնները պատրաստելու համար:

Այլեզրորդական մկրտառի (սեկատորի) օդնությամբ կտրոններ պատրաստել չեն թույլատրվում, քանի որ ճղմվելու հետևանքով յնափայտը կտրվածքի մոտ քայլայվում է և այդ սրատճառով կտրոնի գգալի մասը փառում է և չի արմատակալում: Կտրոնները պետք է պատրաստել սուր գանակի օդնությամբ, որքան կարելի է փոքր չեղության և հարթ մակերես ունեցող կտրվածքով, առանց կեղեկի քերծվածքների: Կտրոնի վերեկի կտրվածքը պետք է կտարեկլ բողոքնի անմիջապես վերելից, համարյա թե չժողնելով միջանդուցային տարածությունից դդալի մաս, որովհետեւ բողոքնից վեր մնացած չի մասը սովորաբար հետադայում չորանում է, ներովում, քայլայվում և կարող է պատճառ դառնալ մատղաշտում տունկի բնի հիվանդանալուն: Կտրոնի ներքեկի կտրվածքը, նույն ձեռվ, ինչ որ վերեխնը, արվում է բողոքնից ցած, ըստ որում, եթե կտրոնը պատրաստելուց անմիջապես հետո չի տնկվելու, այլ պահպելու է երկար ժամանակ, այդ դեպքում միջանդուցային տարածությունից թողնվում է մի փոքր մաս, որը հեռացվելու է կտրոնի անկելուց առաջ կատարվող կտրվածքի թարմացման ժամանակ: Կտրոնի հիմքի կտրվածքի թարմացումը անհրաժեշտ է այն պատճառով, որ կտրոնի պատրաստումից հետո կտրվածքի մակերեսի բնափայտի ցամաքած շերտը հեռացվի, որը կնպաստի կալլուսի առաջացմանը: Եթե երկար պահելու հետևանքով կտրոնները ցամաքել են, որը նկատելի է կեղեկի կնճուտած լինելուց, նախքան տնկելը անհրաժեշտ է մեկ օրով կտրոնները ընկդմել ջրի մեջ: Կտրոնները պատրաստելիս կամ թարմացնելիս, կտրվածքը պետք է ուղղված լինի բողոքնից հակառակ կողմից դեպի վեր (կամ ցած, եթե հիմքի բողոքնին է վերաբերվում) այն հաշվով, որ աչքի տակ մնա միջանդուցային տարածության բնափայտի շատ փոքր մասը. այդ արվում է այն նկատառումով, որպեսզի բողոքնից հիմքում բնափայտը ցամաքել և բացի այդ հեռացվեն պլաստիկ նյութերի պաշարները, որոնք

սովորաբար առվելի շատ կուտակված են լինում բողբոջի հիմքին մոտ և անհրաժեշտ են կտրոնի արմատակալման ընթացքում սննդախոփանակման համար:

Բարդու կտրոնների տնկման համար ընտրվաղ հողամասը պետք է մշակվի 30—40 սանտիմետրից ոչ պակաս խորությամբ: Դարնան տնկումների համար հողամասը պետք է վարդի նախորդը տարբաւ աշնանը: Բարդիները, լավ զարգանալու համար, գերազանցում են ավազակալվային հողերը. ծանր կավային հողերում օդի գիշաբ մատչելիության պատճառով, կտրոնների արմատակալումը ավելի դանդաղ է ընթանում և չարմատակալվող, նեխվող կտրոնների տոկոսը մեծ է լինում:

Կտրոնները պետք է տնկվեն նախառես պատրաստված փոսիկների մեջ: Կտրոնը փոսի մեջ իջեցնելիս հիմքի կտրվածքի կեղեղ ոչ մի դեպքում չփետք է վնասվի: Կտրոնը ուետք է տնկել ուղղաձիգ կերպով կամ չնչին թեքությունով այնպիսի խորությամբ, որպեսզի վերին բողբոջը լինի գետնի մակերեսութիւն հավասար: Խոր տնկելու նպատակն է՝ կանխել զարգաթի բողբոջի վաղ բացվելը և մինչ արմատի զարգացումը կտրոնի տերևակալումը, որովհետև զարգացող տերևների կողմից կատարվող դուրշիացման հետևանքով կտրոնի մեջ եղած խոնավությունը նվազում է և, եթե արմատակալումը դեռևս տեղի չի ունեցել, կտրոնը կարող է ցամաքել ու չորանալ: Արմատակալման համար կարևոր նշանակություն ունի կտրոնը փոսիկի մեջ իջեցնելուց հետո նրա հողի հետ սերտ շիման մեջ դանվելը. դրա համար էլ կտրոնը փոսիկի մեջ տեղափորելուց հետո նույն տնկող ձողը պետք է լրել հողի մեջ կտրոնի փոսիկ փոքր ինչ հեռու և թեք, ուղղելով դեպի կտրոնի հիմքը և ապա ձողը թեքելով դեպի կտրոնը սեղմել հողը կտրոնին, ձողը հեռացնելուց հետո նոր առջայած փոսը պետք է լցնել հողով:

Կտրոնները տնկելուց անմիջապես հետո հարկավոր է ջրել: Առաջին ուղղումից հետո, հենց որ հողի վերին շերտը բարձականաչափ ցամաքի, անհրաժեշտ է հողուրազով կամ երկաթի փոցիսով փլարացնել հողի մակերեսը: Այդ աշխատանքը պետք է կատարել դղուշությամբ, որպեսզի կտրոնների հողից դուրս եղած բողբոջները չվնասվեն: Փլարեցումը անհրաժեշտ է հողի վերին

չերտի օդի վոլխանակությունն առահովելու համար, որը կտրուն-ների արմատակալման ժամանակ խիստ անհրաժեշտ է:

Բրդաձև բարդու կտրոնները կարող են տնկվել մշտական տեղում և հասուկ տնկարաններում, հետադայի ծառատնկման համար տնկիներ ստանալու նպատակով: Տնկարաններում բարդու տնկիներ աճեցնելու առավելությունը կայանում է նրանում, որ առաջին երկու տարվա ընթացքում, համեմատաբար փոքր առարձություն մշակելով, մենք կստանանք մեծ քանակությամբ պատրաստի տնկիներ, որոնք մշտական տեղում տնկելու, ամենի հաջող կկալչեն և ավելի շուտ կկազմակըրեն ծառուտը:

## Տ Ն Կ Ա. Բ Ա. Ն

Տնկարանի համար ընտրմած հողամասը պետք է լինի հնաբավորին չափ հարթ և ապահովմած ոռոգող ջրով: Նախընտրելի են ավաղային կամ ավաղակալային հողեր: Հողամասը պետք է հերկել աշնանը մինչեւ ձմռան ցրտերի սկսվելը: Հերկի խորությունը պետք է լինի 30—40 սմ ոչ պակաս, որպեսզի երկու տարի տնկարանի մարդերում աճող տնկին կարողանա զարդացնել լավ արմատացնեն սխստեմ: Վաղ գարնանը հողամասը կրկնալարելուց և փոցխելուց հետո պետք է սրատրաստել ոռոգման ցանցը, որից հետո արդեն անցնել կտրոնների տնկմանը: Մեծ տնկարաններում տնկումը պետք է կատարել երկարաձիր շարքերով փերեցման և քաղհանի աշխատանքները մեքենայացման ենթարկելու համար, իսկ եթե տնկարանը փոքր է, արտադրելու է սահմանափակ քանակի տնկիներ, այդ գեղքում կտրոնների տնկման համար պատրաստվող մարդերն ել պատրաստվում են ինամքը ձեռքի աշխատանքի միջոցով կատարելու նկատառումով:

Ջիու կուտիվատորի օգնությամբ փերեցնելու և մոլախոտերից մաքրելու համար կտրոնները պետք է տնկել այնպես, որ միջարքային տարածությունը լինի սոնկացն 70 սանտիմետր չարքերում կտրոնները տնկել իրարից 15—20 սանտիմետր հեռավորության վրա:

Շարքերում փերեցումը և մոլախոտերի քաղհանը կատարվում է ձեռքի գործիքների (հողուբաղ) միջոցով:

Եթե մեկ հեկտար տնկարանի վրա կտրոններով պլաղեցրած տարածությունը ընդունենք 80 տոկ. չափով (մնացած տարածությանը թողնելով ճանապարհների և ոռոգող ցանցի համար), ապա տնկարանի մեկ հեկտարը կարող է տալ մինչև 50—60 հազար տնկի, որը, 2 տարեկան հասակում տնկելու դեպքում, բավական կլինի մոտ 15 հեկտար ծառուտի համար: Այսպիսով, բրամածե բարդու տնկիները նախապես տնկարանում աճեցնելու միջոցավ մի կողմից խոշոր չափով աշխատանքի անտեսում եք կառարում, իսկ մյուս կողմից հնարավորություն եք ունենում ընտրովի, որակավոր տնկիներով ծառուտաների տնկում կատարել:

Փոքր տարածություններով կտրոնների տնկարան կազմակերպիս, նույն ձևով սոսով առաջան ցանցը անցկացնելուց հետո, պատրաստում են 10—20 մետր երկարության և մեկ մետր լայնության մարգեր: Մարգերը իրարից բաժանել թմբերով, որոնք անհրաժեշտ են ուսուցման համար, և խնամքի աշխատանքների ընթացքում աշխատող բանվորներին կանգնելու համար:

Մարգերում կտրոնները տնկվում են մարգի առանցքին ուղղահայց շարքերով: միջարքային տարածությունը տրվում է 25—30 սանտիմետր, իսկ շարքում կտրոնները տնկվում են իրարից 15 սանտիմետր հեռավորության վրա:

Տնկարանում, կտրոնների արմատակալման բարձր տոկոս արագությամբ համար, տնկումները, ինչպես նաև նրանց հետադախնակը և մշակությունը, հարկավոր է կատարել որակով և ժամանակին: Առաջին ջուրը պետք է տրվի կտրոնները տնկելուց անմիջապես հետո և պետք է հետեւել, որ հաջորդ ջրելը չուշացվի և դրա հետեւանքով հաղոյ չչորանա: Յուրաքանչյուր ոսոցումից հետո, հաղը քեշի գալումն պես նրա մակերեսը փխրացնել և թույլ չտալ կեղեի գոյացումը, որը մանավանդ վարանդավոր է, կտրոնները տնկելուց հետո, առաջին ամամիա բնթացքում, երբ կտրոններից պետք է առաջանան ու զարգանան նոր արմատները:

Յուրաերի կտրոններով բարձանալու հատկությունը պայմանափուլած է նրանց կենդանի հյուսվածքների զարդացման նորման պայմանները խախտելուց՝ այդ հյուսվածքների միերանորոգության հատկության վրա: Հանրածանոթ է, որ անյակային որոշ բյուսերի (օրինակ, Փիկուսինը) շվերի կտրոնները ջրով լիը չեն մեջ երկար ժամանակ պահելիս, կտրոնի ցածի կտրումածքի

վրա սկսում է առաջ դալ բաց գույնի լրացուցիչ հյուսվածքային կոմպլեքս, որը հետզհետև ձգտում է ծածկել շվիր կարվածքը և ապա դարձացնել արմատներ: Այդ առաջացող հյուսվածքային կոմպլեքսը կոչում է կալյուս: Նրա առաջացումը ընթանում է հետեւյալ կերպ: Կարսնի հիմքի կարվածքի վրա, ի հաշիվ վնասված և նրանց ավելի մոտ զոնվող բջիջների հյութի, առաջանում է պաշտպանական մի բարակ թաղանթ, որն արգելակում է միկրոօրգանիզմների թափանցելը կարսնի ներսը: այդ թաղանթի պաշտպանության տակ բույսի ալիքի կենսունակ, կամքիալ և կեղեկ հյուսվածքների բջիջները, բաժանման միջոցով, սկսում են արագ բարձրանալ և ծածկել կարսնի հիմքի կարվածքը մի ուռուցիկ դանակով, որի արտաքին մակերեսը ծածկված է լինուած խցանային հյուսվածքով: այս խցանային հյուսվածքի տակ բջիջների հետազոտական աշխատացումը սկզբնավորում է արմատներ, որոնք հեղեղով խցանային հյուսվածքը, զարդանում և սկսում են սնել աճող բույսը:

Եկարտաղրիած այս պրացեսը կարող է ընթանալ միայն խոնավության պայմաններում և, եթե այդ պայմանը ընդհատվի, այսինքն հոգի վերնաշերտը, որտեղ անկված է կարսնը, չորանա, կալյուսակի դարձացումը կանգ կամնի ու, առվորաբար, կարսնը կնեսի: Բջիջային հյութի հաշվին առաջացող թաղանթներին, առաջանալու միայն օդի առոկայության պեպքում: առանց օդի թթվածների, բջիջները չեն չփառում և նրանց բաժանումը նույնական կանգ է առնում:

Այս բոլորից պարզ է, թե կարսնների հաջող արմատակալման համար որքան մեծ նշանակություն ունեն ոռոգումը և հոգի մակերեսի լավ փիսրեցումը:

Ինքնին պարզ է, որ մոլախոտերի զարդացումը, խլելով հողից սննդանյութեր, պետք է նվազեցնի կարսնից աճած բույսի զարգացումը: մյուս կողմից էլ, մոլախոտերը ստվերի տակ թաղոների լուսասեր բրդածե բարդու մատղաշ շվերը և տերենները, կարգելին ասսիմիլացիոն պրոցեսը, իսկ մոլախոտերը խատանալու դեպքում, մինչեւ անդամ լույսի պակասության հետեւանքով, առաջ կը երեքն թեկուղ արմատակալած տնկինների դալկացում և չորացում: Այստեղ նույնպես տեսնում ենք, որ քանի դեռ բարդու նոր աճող տնկին իր բարձրությամբ չի դերագանցել մոլախոտե-

18629

րին, վերջիններիս քաղհանը խնամքի ամենաէակարն աշխատանք-ներից մեկն է և պետք է կատարվի տնկարանում 2 տարվա ըն-թացքում՝ որտեղով ու ժամանակին : Հետագայում, երբ տնկիները փոխադրվեն ծառոււմ՝ իրենց մշտական վայրը և զարգանան, քաղհանի անհրաժեշտությունն այլևս չի դդացվի : Բրդաձև բար-դու բուսակները տնկարանում աճեցվում են 2 տարի :

Սովորաբար, առաջին տարվա ընթացքում, բրդաձև բարդու տունկերը ուժեղ շիվ չեն զարգացնում : Աճը ուժեղանում է երկ-րորդ աարվա ընթացքում : Լավ խնամքի վեալքում երկու տարե-կան բուսակները հանոււմ են 1,5 մետր բարձրության :

Տնկարանում համեմատաբար մեծ քանակությամբ բանվո-րական ուժ պահանջող աշխատանքների շարքին է պատկանում տնկանյութի (կտրոններից աճած տնկիների) հանելը : Այդ աշ-խատանքը կատարվում է հետեւյալ կերպ, մարդի ծայրում, տնկի-ների շարքին գուղաճեռաբար, փորիկում է ակոս՝ 35—40 սան-տիմետր բանությամբ և 30 սանտիմետր խորությամբ : ամբար-պատրաստ լինելոց հետո, երկու բանվոր, խորելով իրենց բահերը հողի մեջ ու միաժամանակ թեքելով գեպի նախագիս վորված ակոսը, շրջում են տնկիների շարքը արմատների հիմքից հո-ղամշերով, ապա բանվորներից մեկը սուր բահով կտրում է տնկիների խոշոր արմատները, իսկ մյուսը՝ զդուշությամբ հո-ղից հանում է (քաշում) տնկիները : Մարդի առաջին տնկի-ները այդ ձևով հանելուց հետո անցնում են երկրորդ շարքին և նույն կարգով հանում ամբողջ տնկանյութը :

Խոշոր տնկարաններում, տնկիների հանելը կատարվում է գութանի օդնությամբ : Նախագիս գութանով ակոս են անցկաց-նում և առա բահերով տնկիները շրջում են ակոսի մեջ ու հա-նում :

Տնկիները իրենց գարգացմամբ միասնակ չեն լինում : Ուժեղ աճածների կողքին լինում են նաև թույլ շիեր կամ ար-մատներ ունեցողներ : Տնկումների հետազա հաջողության հա-մար, տնկիները հանելուց հետո պետք է նրանց տեսակալուրել : Զարգաղանց թույլ, նվազ աճած տնկիները խոտանել, իսկ տնկիման համար պիտանի տնկանյութը հարկավոր է անմիջապես թաղել հողում այնպես, որ ամբողջ արմատային սիստեմը և բնի-որոշ մասը հողով ծածկված լինի :

Այս վերջին միջոցառումը անհրաժեշտ է արմատային սխալքեմի կենսունակությունը պահպանելու համար։ Չպետք է երբեք մոռանալ, որ արևել տակ, չոր օդում կամ քամու աղբեցությունից բռնյի մաղարմատները շատ չուտ չորանում են, և տնկիները կորցնում են իրենց կպչողականությունը։

Եթե տնկանյութը փոխադրվելու է հեռավոր վայրեր, այդ դեպքում անհրաժեշտ է տնկիներից խորձել կապել, փաթաթել արմատները խոնավ մամուռով կամ հարդով և ավտոմեքենայի վրա դասավորել այնպես, որպեսզի տնկիների արմատները լինեն ծածկված։

Մեր պարմաններում ծառատունկը գերադասելի է կատարել վաղ գարնանը։ Այդ պատճառով տնկիների հանելը տնկարանում պետք է կատարել նույնույթ գարնանը և աշխատանքները դառավորել այն հաշվով, որպեսզի տնկանյութը հանելուց հետո, որքան հնարավոր է, կարճ ժամանակում փոխադրվի ծառատոնկման վայրն ու տնկին։

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Բրդաձև բարդու ծառուտները կարելի է տնկել թե՛ կարոններով և թե՛ նախարար տնկարանում կտրոններից աճեցրած Զ սարելկան տնկիներով։

Կտրոններով տնկելու դեպքում, աշնանից հերկված հողամասում վաղ գարնանը դութանի օգնությամբ փորել խոր ակոսներ և բանվորների միջոցով կտրոնները տնկել ակոսների մեջ, չարքերը մեկը մյուսից 1,75—1,8 մետր հեռավորության, իսկ ծառաշարքերում ծառերը մեկը մյուսից 1,5 մետր հեռավորության վրա, չափատաճե դասավորությամբ։ Այս կերպ տնկված ու աճեցրած մեծահասակ ծառուտի մեկ հելտարը կունենա մինչև 4000 ծառ։ Ծառուտը աճերու համար երկար տարիներ կպահանջի, ուստի, հարց է առաջանում, արդյո՞ք նպատակահարմար է հենց ակդրից և եթ, երբ դեռևս ծառատունկը չի բարձրացել և մատղաշ ծառերի միջև փոխադարձ պայքար (սննդի, լույսի և խոնավության համար) առաջ չի եկել, կտրոնների տնկումը անտառացվադ հողամասերում կատարել վերջնական նոսրությամբ, արդյո՞ք

հպատակահարմար չէ օդտագործել արդեն ստեղծված պայման-ները, կատարված աշխատանքը և կտրոնների անկումը շարքերում կատարել ավելի խիստ, այնպէս, որ երկու տարուց հետո նրանց մի մասը հանվի և որպէս տնկանյութ օդտագործվի: Այս նկատառումով ծառատնկումը կտրոններով կատարելու դեպքում շարքերում, կտրոնների միջև, տարածությունը պետք է ընդունել հետեւյալը. առաջին և երկրորդ կտրոնների միջև 50 սահաժմետը, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ կտրոնների միջև 16—17 սահաժմետը, հինգերորդ ու վեցերորդ կտրոնների միջև նորից 50 սահաժմետը, այսպիսով 1,5 մետրի վրա կունենանք վեց կարոն, որոնցից երկուսը (ծայրերում տնկվածները) թողնվելու հն ծառուտում, իսկ իրար ավելի մոտ տնկվածները (միջի մասում տնկվածները) հետադարձ ենթակա են հետացման:

Այս սխտեմի տնկումներով, նախ, մենք կառահովենք անհրաժեշտ որայիմաններ՝ առպազայի ծառուտը կազմող բուսակների ամելի ուժեղ աճի համար, միաժամանակ ոսողման, փիլիկցման և քաղհանի համար, առանց լրացուցիչ աշխատանք կատարելու, երկու տարուց հետո մեկ հեկտար նոր տնկված ծառուտից կըստանանք մոտ 15000 հատ տնկիններ՝ այլ տեղերում օդտագործելու համար: Բացի այդ, հանվելիք տնկինները, մշտականներից հետո տնկելով, մենք ապահովում ենք տեղում մնացող բուսակների արժատային սխտեմի անվտանգությունը ավելորդ բուսակների հանելու ժամանակի:

Կտրոնները մշտական ծառուտում պետք է տնկիննույն ձևով ու խնամել այնպէս, ինչպէս տնկարաններում տնկելու դեպքում:

Բարդուանները տնկարանում նախագես անեցրած 2 տարեկան տնկիններով տնկելու դեպքում, միջարքային տարածություններում բույսերի հետափորությունը պետք է վեցինեկ 1,8 մ, իսկ շարքերում բույսերի հետափորությունը 1,5 մետր: Տնկումը կատարվում է երկու բանվորների միջացով, որոնցից տառաջնորդ վորում է վոստը, իսկ երկրորդը տնկին իջեցնում է վոստի մեջ, ուղղում նրա արժատային սխտեմը, հետեւում է, որ տուաջին բանվորի կողմից լցվող հողը բռնի արժատաների միջի բոլոր խորշերը և չխճճի արժատաները: Տնկելու ընթացքում պետք է ողահպահվեն հետեւյալ կանոնները:

ա) Տնկին պետք է տնկվի այն խորությունը, ինչ խորությունը

եղել է իր աճման տեղում, այսինքն ընի և արմատային սխտեմի սահմանը պետք է լինի հողի մակերեսին հավասար: Թեև բրդածե ըստին, որպես վեգետատիվ ձեռվ բարձացվող ծառատեսակի, այնքան էլ չի տուժում այս պայմանը խախտելիս, ինչպես սերմերով բարձացվող ծառատեսակները, բայց և այնպես, պահպանելով տնկման այս կանոնը, մենք հնարավորություն կտանք բույսին, հենց սկզբից, ավելի նորմալ աճելու: Բրդածե բարդու տնկումների ընթացքում պետք է խուսափել արմատները բաց թողնելուց:

բ) Տնկելուց հետո, մինչ առաջին բանվորը կսատրաստի հետեւյալ փոսը, երկրորդը, ուղղաձիղ դրությամբ սպահովանելով տնկին, սկսած տնկման փոսի եղբերից, զգուշությամբ ոտքով արտուռում է հողը գեղի ներս: Այս աշխատանքը ունի մեծ նշանակություն, որ ջրելուց հետո տնկին չի թեքի և հողը նատելու հետևանքով արմատները չեն բացվի: Ջրելուց հետո սոուզելիս, եթե հայտնաբերվեն թեքլած տնկիներ, անպայմանողին պետք է այլպիսիներին տալ ուղղաձիղ դրություն, այլապես նման տընկիների բները, իրենց աճեցման ընթացքում, ձգտելով վերականգնել ուղղաձիղ վիճակը, կտան ծուռ բներով աճած ծառեր, որոնք շինափայտի համար պիտանի չեն լինի:

դ) Տնկանյութը ծառատնկման վայրը փոխադրելուց հետո, անմիջապես պետք է թաղել խոնավ հողում և տնկումների ժամանակ մաս-մաս հանել ու տնկել:

դ) Հանելու ժամանակ վնասված արմատները պետք է հեռացնել և խոշոր արմատների կտրվածքները սուր դանակով թարմացնել:

ե) Եթե տնկելուց անմիջապես հետո ջրելու հնարավորությունը չկա, տնկիների արմատները նախքան տնկելը պետք է թաթափել կամահողի շաղախի մեջ, որը պետք է նախապես պատրաստված լինի հատուկ տակառներում: Ավելի քան ցանկալի կլինի նման գեղքում դույլերի օդնությամբ նոր տնկումները ջրել: Այս ժիջոցառումը անպայմանորեն անհրաժեշտ է կերառել հողի չոր լինելու և տնկումների ժամանակ բնական տեղումների բացակայության դեպքում: Կտրոնները խնամքով պատրաստելու, տնկելու և լայլ խնամելու դեպքում համարյա 100 տոկոսով արմատա-

կալում են : Խնամքով տնկելու դեպքում Արիվ կերպով կաչում են նաև արմտակալած տնկիները :

Տնկումների հետագա խնամքն է՝ ոսողումը, հողի մակերեսի փլրեցումը, մոլախտերի քաղհանը և այլն : Ծառատնկման առաջին տարիներում միջարքային տարածությունները նպաստակահարմար է օդտալործել բանջարանացային կուլտուրաների, արմտատալուղների, առվլույտի կամ այլ խոտարույսերի ցանքի տակ : Այս միջոցառումը հնարավորություն կտա օդտալործել ծառատնկմանը հառկացրած հողամասը, մինչև ծառուտի բարձրանալը և խոտանալը :

Բրդաձև բարդու մատղաշ ծառուտի խնամելու հետագա միջոցառումներից են նաև ծառի արմատավլղիկց առաջացող ընձյուղների (չլեռի) պարբերաբար հեռացումը, բայց այդ, ծառերի դեպի վեր աճելուն զուղընթաց, հարկավոր է նրանց ըների ցածի մասում առաջացած չվերը հեռացնել : Առաջին միջոցառումը անհրաժեշտ է, որպեսզի արմատավլղիկի ընձյուղները ուժեղ զարդանալով չնվազեցնեն բնի գաղաթային աճը, իսկ երկրորդը՝ որպեսզի բնից աճող չվերը հաստանալով չդժեն բնի, որպես շինափայտի, որակը : Բնից հեռացվող չվերը պետք է կտրել հրամքից, որպեսզի առաջացած վերքերը արագ ծածկվեն աճող, հաստացող բնի կենդանի փայտանյութով : Այդ չվերը հեռացնել այն հաշվով, որ ծառի սաղարթի տերևային մակերեսը չպակասի 1/3-ից ավելի, և ծառի աճը չդանդաղի : Խնճին հասկանալի է, որ անհրաժեշտության դեպքում տնկարքներում տնկելու հաջորդ զարնանը պետք է կատարվի լրացում, եթե այս կամ այն պատճառով տեղի է ունեցել կտրոնների կամ տնկիների մի մասի չըրացում :

## ԲՐԳԱՋԵՎ ԲԱՐԴՈՒ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԿԱՆԱԶ ԿՏՐՈՆՆԵՐՈՎ

Կանաչ կամ ամառային կտրոններով, սովորաբար, բազմացվում են այն ծառատեսակները, որոնք դժվարությամբ են բաղմանում այլ ձևերով (աերմերով կամ ձմեռային կտրոններով) : Կանաչ կտրոններով բազմացվում են նաև այն դեպքում, եթե

Հնարավոր չէ պահանջվող քանակությամբ սերմեր կամ ճմեռամբն կտրոններ ունենալ:

Բնգածեն բարդին, ինչպես վերը տեսանք, հեշտությամբ բարձացվում է ձմեռային կարոններով: Չնայած դրան, նրա կանաչ կտրոններով բազմացնելու ձեզ մեղ համար հետաքրքրություն է ներկայացնում հետեւյալ նկատառությունը. բարդութների մեծացնակ տնկումների համար, չափ դեպքերում, մայր ծառերից ստացվող կտրոնների քանակը կարող է ըբալարարել պահանջը, իսկ տնկանյութը ցանկալի է սուսանալ տեղում աճած մայրակներից, արովհետեւ սրանք արդեն հարմարվել են տվյալ ընթանի կվեմայական և էկոլոգիական պայմաններին, հետեւաբար նրանցից աճեցրած տնկանյութը նույնպես ավելի դիմացկուն կլինի այդ վայրում: Այս համբաւմանը ավելի կարեւոր նշանակություն տնի բարձրագիր, լուսային շրջանների համար, որտեղ բրդաձև բարդու ժառերի քանակը կարող է չափ սահմանափակ լինել:

Կանաչ կամ սմառացին կտրոն ստացվում է ամառ՝ ընթացիկ տարիա աճող չլից: Եթէ փայտացած կտրոններ պատրաստելու համար պիտանի են միայն ուժեղ զարդացած կամ երկու տարեկան չլիցը և պատրաստված կտրոնների թիվը դրանով իսկ սահմանափակվում է, նույն մայր ծառերից սմառային կանաչ կտրոններ կարելի է պատրաստել ավելի մեծ քանակությունը, որովհետեւ սմառային կտրոնները ավելի կարճ են կտրվում, քան ձմեռայինը:

Կանաչ կտրոնների համար վերջնում են ավելի երիտասարդ ծառերի ուժեղ աճող և ընին ավելի մոտ գտնվող չլիցը: Կանաչ կտրոնները ավելի հաջող են արմատակալում, երբ նրանց համար ընտրված չլիցը դեռ նոր են սկսել փայտանալ, իսկ կեղեր դիմաս պահպանում է թարմ կանաչ դույնը: Այդ վիճակին հասնում են բրդաձև բարդու չլիցը մոտավորապես հունիսի ընթացքում:

Բարդիների կանաչ կտրոններով բազմացնելու փորձը ցույց է ավել, որ արմատակալումը տեղի է ունենում անկախ կտրոնի երկարությունից: Այսպես, օրինակ, թե 2—3 աչքանի (10—12 սմ երկարության) և թե մեկ աչքանի (3—4 սմ երկարության) կտրոնները հավասարապես արմատակալել են 75—100%-ով:

Կտրոնների համար ընտրված չլիցը պետք է կարել վաղ ա-

ուավոտյան, երբ տերևների ու մատղաշ չվերի մեջ խոնավության քանակությունը լինում է ավելի շատ: Կտրելուց անմիջապես հետո չվերը իրենց հիմքով դնել ջրով լի գույլերի մեջ: Այդ չվերից ստացված կտրոնները պետք է անմիջապես տնկվեն սառը ջերմոցներում: Բլղաձև բարդու կանաչ կտրոնը ավելի լավ է կտրել երկու աչքանի, որովհետև մեկ աչքանիները կարճության պահանջում ջերմոցում, ավազի մեջ խորը չեն նստում և խոնավության պակասության դեպքում կարող են չորանալ: Կտրոնների վրա հարկավոր է թողնել միայն զաղաթի մեկ տերեր, իսկ եթե վերջինս խոչըր է, այդ գեղագում միայն նրա կեսը: Կանաչ կլորոնները պետք է պատրաստվեն սուր դանակներով: Կտրվածքը պետք է կատարել տերեւային բարձիկի հիմքին մոտ, առանց միջհանգուցային մասի խոչըր մնացորդի:

Քանի որ ջերմոցում կտրոնները մնալու են մինչև հետեւյալ տարվա դարունը, ուստի նրանք պետք է ունենան արմատակալմանը նպաստող ավազի շերտից բացի նաև նրա տակը հողի մնընդառածու շերտ, որտեղ զարդանալու են կտրոնների արմատները և սուլահովիվելու է չվերի աճը: Ջերմոցը պատրաստվում է հետեւյալ կերպ՝ սուրերկից ջերերից չճահճացող հողամատում փորել 40—45 մմ խորությամբ քառանկյունի վոս, որը 20 սանտիմետր խորությամբ լցնել սեահողով: Վերջինիս վրայից 10 սանտիմետր հաստությամբ լցնել պետք լվացված խոչըր ավազ: Ջերմոցի շրջանակները պետք է լինեն լավ հարմարեցրած կողերի տախտակներին, որպեսզի կարելի լինի ջերմոցում պահպանել օդի անհրաժեշտ խոնավությունը: Ջերմոցը պատրաստ լինելուց և ավազի շերտը ջրելուց հետո կատարել կտրոնների տնկումը, ըստ որում մեկ չլջանակի տնկումը ալարտելուց և տնկված կտրոնները ցնցուղով ջրելուց հետո, չլջանակը ծածկել ու ապա անցնէ, հետեւյալ շրջանակի տնկմանը:

Կտրոնների արմատակալումը պարմանավորված է լավ խնամքով և առաջին հերթին ջերմոցի օդի խոնավության պահպանումով: Տնկումներից հետո, օրական 2 անգամ, առավոտյան և երեկոյան ժամերին, պետք է ջրել ցնցուղներով: Առաջին 15—20 օրվա ընթացքում չլջանակները պետք է բանալ միայն ջրիուժամանակ, իսկ հետադայում, արելից հետո յուրաքանչյուր օր մի քանի ժամ: Մինչև կտրոնների արմատակալելը, արելից

պաշտպանելու համար, ջերմոցը պետք է ծածկել սովերացնող ծածկոցներով, որոնք կարելի է պատրաստել ճյուղերից։ Ջերմոցում օդի ջերմաստիճանը 20—25°-ից չպետք է ացնի։

Լավ խնամքի պայմաններում սովորաբար մեկ ամսվա ընթացքում կրտոնները արժատակալում են և շվերը սկսում են աճել։ Տնկումներից երկու ամիս հետո պետք է հետևել, որ բույսերը ընտելանան բնական պայմաններին։ Օրվա երկրորդ կեսին ջերմոցի շրջանակները հարկավոր է ավելի երկար ժամանակով քանակ և հետզհետեւ նվազեցնել սովերացումը։ Սեպտեմբերի ոկտոբերից ջերմոցը կարելի է բռուրովին բաց թողնել։ Հետևյալ ռարդիս գարնանը բուսակները ջերմոցից տեղափոխել անկարան։ Մեկ տարի տնկարանում պահեցուց հետո արդեն կարելի է, որպես տնկանյութ, մշտական ծառատնկման համար օդոպաղործել։

## ԲՐԳԱԶԵՎ ԲԱՐԴՈՒ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ ԲԱԶՄՈՄԸ. ՃՅՈՒՂԵՐՈՎ

Բրդաձեւ բարդին կարելի է բազմացնել նաև բազմամյա ճյուղերի արժատակարման միջոցով։ Այդ նպատակի համար ընտըրվում են 3—4 տարեկան տևլիութ աճած և առողջ ճյուղեր և դրանց արարատաստում 1,5—3 մետր երկարության ձողեր։ Որպես տնկանյութ՝ զործադրվող բազմամյա ճյուղերը պետք է պատշաճուն վաղ դարնանը, մինչև բողբոցների բացվելը, կամ աշնանը՝ տերեաթափից հետո։ Աշնանը մթերած ճյուղերը հարկավոր է մինչև դարուն պահել խոնավ նկուղներում, ավազի մեջ։

Գարնանը, տնկելուց առաջ, անհրաժեշտ է սուր կացնի օդությամբ սրել ճյուղերի հիմքը։ Տնկումը կատարվում է հատուկ երկար ցցերի օդությամբ, նախապես պատրաստված 40—50 առնաժմետր խորության քառանկյունի փոսերում։

Հասկանալի է, որ մեծ քանակությամբ բազմամյա ճյուղերի կարոններ պատրաստելը ավելի դժվար է, ուստի այս տեսակի տնկանյութը պետք է տնկել այնպիսի վայրերում, որտեղ արժատակալելու համար ավելի նպաստավոր պայմաններ կան։ Այդպիսի վայրեր են մեղ մոտ՝ տողող առուների թմբերը, այգիների ռահմանային առուների եղբերը և միջդյուղյան ու այլ ճանապարհների եղբերը, որոնց ուղղությամբ առուներ են անցնում։

Բրդաձեւ բարդու բարմամյա ճյուղերով բազմացնելու ձեւ  
տարածված է Արարատյան դաշտավայրում և տալիս է միանդա-  
մայն դրական արդյունք: Բարդու բարմացման այս ձեւը առնել այն  
առավելությունը, որ մի կողմից կրծառվում է ծառերի շահա-  
գործման հասնելու ժամկետը, իսկ մյուս կողմից, ծառերի արագ  
հատունանալու չնորհելի, ավելի շուրջ է վերանում քաղհանիք,  
փխրեցման աշխատանքների անհրաժեշտությունը:

Կատկած չի կարող լինել, որ ամենուրեք, ուր հնարախոքու-  
թյուն կիրի պատրաստել մեծ քանակությամբ բազմամյա ճյու-  
ղերի կորոններ և անկումները ապահովված են ուսուղ ջրով,  
ովհանք է խրախուսվի բրդաձեւ բարդու բարմացման այս ձեւը:

## ԲՐԳԱԶԵՎ ԲԱՐԴՈՒ ՎՆՍՈԼՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻԱՅՈՑՆԵՐԸ

Բրդաձեւ բարդու տերեները և վայրտանյութը վնասավում են  
ինչպես միջատներից, այնպես էլ սնկային հիվանդություններից:  
Բայս որում, որոշ մնասատու միջատների ուժեղ բարմացումը կատ-  
անկային հիվանդությունների խետա զարդանալը կարող են առաջ-  
բերել ոչ միայն ծառերի ամել նվազում կամ նրանց ժամանակա-  
վոր հիվանդացում, այլև չորացում, վայրտանյութի փառում:

Մառուսում սնկային հիվանդությունների տարածումը կան-  
խելու անհրաժեշտ պրոֆիլակտիկ միջոցառումը ծառերի բների  
վրա վելքեր չառաջացնելն է: Մասի կեղեւը լավագույն այն պատ-  
ուեն է, որի չնորհելի վայրտանյութը անմատչելի է զանում՝ որն-  
կային հիվանդությունների համար և, եթե մենք վնասում ենք  
կեղեւը, գրանով իսկ ճանապարհ ենք բացում սունկի ընդիկին  
(ահրմնիկին) դեպի նրա զարդացման համար անհրաժեշտ միջա-  
գործքը — վայրտանյութը: Եվ որովհետեւ բրդաձեւ բարդու վայր-  
տանյութը զուրկ է հականեխիչ այն նյութերից, որոնց միջոցով  
նա հնարավորություն չունի մեկուսացնել հիվանդությունն ու  
կանխել նրա քայլայիչ տարածումը, ուստի ավելի է ենթակա  
վերքերից թափանցող հիվանդություններին: Այս հանգամանքը  
ելքեք աչքաթող չպետք է արվի բրդաձեւ բարդու տնկումների:

վրա աշխատառ և նրա ծառուտները խնամող կոլլոպնիկների կողմէց:

Տերեների վրա հաճախ բշտիկների ձեռվ նկատվող ուռուցքները, որոնց դոդավոր կողմը (տերեւի ներքեւի մակերեսը) ոսկեգույն կամ զեղնավուն է, հետեանք են սնկային հիվանդության, գրա վնասը աննշան է, փայտանյութին չի փոխանցվում և, պակասեցնելով միայն տերեւի դործող մակերեսույթը, աղբում է աճի վրա:

Բարդու տերեւակեր կոչված բղեղը իր ձիթիները գնում է տերեւի թաղանթի տակ և նրանցից ղարդաշող թրթուռները կրծումոչնչացնում են տերեւի հյուսվածքները, թողնելով միայն տերեւի կմախքը: Այս վնասատուի հայտնաբերման դեպքում մատղաշ անկումները պետք է սրսկել փարիզան կանաչի լուծույթով: Խոչշոր ծառուտներում պայքարը պետք է կատարվի ինքնաթիւններից սրսկելու միջոցով: Բրդաձև բարդու տերեներին վնասում են նաև լիիճների խմբին պատկանող վնասատուները, որի հետեանքով նվազում է ծառի աճը:

Պայքարի միջոցն է անաբաղինի կամ նիկոտին սուլֆատի լուծույթով սրսկելը: Ավելի վտանգավոր են փայտանյութի վնասատուները և հիվանդությունները, քանի որ դրանց տարածման և զարգացման հետեանքը լինում է տարիներով աճեցրած ծառի փայտանյութի փչացումը:

Բարդու տերեների վրա հաճախ նկատվում են գնդաձև ուռուցիկներ. դրանք առաջ են բերվում «գալլիցա» կոչվող միջատի թութուռների կողմից. հիվանդության տարածումը և վնասատուի բաղմանալը կանխելու համար, անհրաժեշտ է վնասված շվերը կտրել և այրել:

Բնի փայտանյութը վնասողներից է արտակ կոչված բարդու մեծարեղ բղեղը, որի թրթուռները զարդանալով բնի ցածի մասի կեղեւի խորշերում դրված ձիթիներից, փայտանյութը կրծելով անցնում են բնի ներսը և, տարածվելով բնի մեջ, ծառի բռնը անպետքանում է շինափայտի համար: Այս բղեղի ծառուտում տարածված լինելը կարելի է եղբակացնել մատղաշ ծառերի բների վրա առաջացող ծառերունդերից, կամ ուշադիր դիտելուց բնի կեղեւի խորշերում եղած անցքերից: Որպես պայքարի միջոց պետք է կիրառել կրի և կտվի խառնուրդը, քսելով այն բնի կեղեւին:

Թութուռները ոչնչացնելու նողատակով խիստ վնասված ծառերի փայտանյութը պետք է այրել:

Փայտանյութի համեմատաբար տարածված սնկային հիվանդությունը — սպիտակ վտախտոն է, որից ծառի բնում կարող են փշակներ առաջ դալ: Այդ հիվանդության հետևանքով ծառերի բունը շինափայտի համար անպետքանում է: Սպիտակ վտախտի դեմ պայքարելու համար հարկադրու է ժամանակին հայտնաբերել հիվանդ ծառերը և բնի դեռևս պիտանի մասը օգտագործել, իսկ հիվանդացած, քայլարյալած փայտանյութը այրել:

Առասարակ, սնկային հիվանդություններով վարակված և քայլարյած փայտանյութը միշտ պետք է այրել, որպեսզի հիվանդությունները չտարածվ:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Առողջաբան	8
Բարդիների ցեղի հատկությունները	5
Բրդածե բարդու աճի բարդությունը և ոռողման անհրաժեշտությունը	9
Բրդածե բարդու բարդմաժման ձևերը	11
Տնկարան	15
Եառաւոնկում	19
Բրդածե բարդու բարդմաժումը կանաչ կարուներով	22
Բրդածե բարդու բարդմաժումը բարդմաժյա ճյուղերով	25
Բրդածե բարդու վիատատուները և նրանց գեմ պայքարելու միջոցները	26

Պատ. խմբագիր՝ ԲԻՇԱՐՅԱՆ  
Տես. խմբագիր՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վ. 01911 Գատվեր 374, տիրած 2000, Հեղ. 1, 1 մամ. տպագրական 1,75 մամուլ հանձնված է արտադրության 25/X 47 թ.

Ստորագրված է տպագրության 25/X-47 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008415

ԳՐԱԴԱՐԱՆ

898

A II  
18629